ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/225

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2022թ. թիվ 26/26-1/8488-2022 գրությամբ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 03.05.2022թ. թիվ Ե/Ն-74 գրության հիման վրա, 11.05.2022թ. թիվ 26/26-1/8488-2022 գրությամբ նախաձեռնել է «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/225 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:50-ին և 13.06.2022թ. թիվ 10:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.05.2022թ. թիվ Ե/Ն-74 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված թիվ ՀՊՀՖ-ԷԱՃԱՊՁԲ-22/23 գնման ընթացակարգի արդյունքում գնման հայտ է ներկայացրել «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների տվյալները /հավելված 1. 2/ և առաջակվող ապրանքի ամբողջական նկարագիրը/, ինչպես նաև կցված է այլ Պատվիրատուի կողմից կազմակերպված և այլ ծածկագրով գնման ընթացակարգի դիմում հայտարարություն:

Հանձնաժողովը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջներին համաձայն մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով /համակարգի միջոցով/ ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից շտկված հայտը, սակայն շտկման արդյունքում Մասնակիցը որպես իր կողմից «Առաջարկվող ապրանքի մակնիշ» առաջարկել է «HP Color Laser MFP 178nw» մակնիշի ապրանքատեսակը: Նշված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում

հանձնաժողովը պարզվեց, որ առաջարկվող մոդելը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին: /Հղում՝ https://www.hp.com/sg-en/shop/hp-color-laser-mfp-178nw-4zb96a.html, https://www.zigzag.am/am/hp-color-laser-mfp-178nw-4zb96a.html, https://www.ozon.ru/product/mfu-hp-color-laser-mfp-178nw-155322276/features//:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը նույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի հայտը, իսկ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, կից Ձեզ է ներկայացնում «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/225 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 11:50-ին և 13.06.2022թ. թիվ 10:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/225 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/225 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՀՖ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում էին իրական շահառուների տվյալները /հավելված 1.2/ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարարգիրը, ինչպես նաև կցված էր սխալ դիմում հայտարարություն:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը, սակայն ներկայացված ամբողջական նկարարգրում առկա է սխալ: Շտկման արդյունքում մասնակցի կողմից ներկայացված մոդելը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2022թ. թիվ 26/26-1/8488-2022 գրությունը, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի 03.05.2022թ. թիվ Ե/Ն-74 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ***Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին...:***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում ***մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ <u>հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ***<u>արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի</u>*** մերժման հիմքեր:

Այսպես, «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՀՖ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում էին իրական շահառուների տվյալները /հավելված 1.2/ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարարգիրը, ինչպես նաև կցված էր սխալ դիմում հայտարարություն:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և

ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը, սակայն ներկայացված ամբողջական նկարագրում առկա է սխալ: Շտկման արդյունքում մասնակցի կողմից ներկայացված մոդելը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից շտկման արդյունքում ներկայացված ապրանքի ամբողջական նկարարգրով նշված մոդելը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքատեսակի բնութագրին, մինչդեռ՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունն ընդհանրական է, այն է՝ չի բխում Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված իմպերատիվ պահանջից, մասնավորապես՝ արձանագրությամբ չի նշվել, թե Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված մոդելը Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված որ հատկանիշներին չի բավարարում, միևնույն ժամանակ առկա չէ որևէ հիմնավորում, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ինչ տվյալների և փաստերի վրա է հիմնվել արձանագրելով անհամապատասխանություն, այնուհետև՝ մերժել Ընկերության հայտը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել որպես հետևանք Ընկերության հայտի մերժման իրավաչափությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում առաջացած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանն, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2022թ. թիվ 26/26-1/8488-2022 գրությամբ «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**